«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Միակազմ նախադասությունները Ե.Չարենցի պոեմներում (ուսուցման առանձնահատկությունները)

Առարկան՝ Հայ գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անաստասիա Միրզոյան

Ուսումնական հաստատություն՝ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Անդրանիկ Բարությանի անվան միջնակարգ դպրոց>>
ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3 էջ

Ընդհանուր գաղափար միակազմ նախադասությունների մասին ----------5 էջ

Դիմավոր միակազմ կամ անենթակա նախադասություններ----------6 էջ

Անդեմ միակազմ նախադասություններ----------8 էջ

Եզրակացություն----------12 էջ

Գրականություն ----------13 էջ

Ներածություն

Հայտնի է, որ մարդկանց միջև լեզվական հաղորդակցումը իրականանում է խոսքային հոսքի միջոցով: Բանավոր հաղորդակցումը կարող է տեղի ունենալ երկու կամ ավելի մարդկանց շրջանակում, որոնք կարող են հաղորդակցվել նախադասություններով՝ ինչպես պարզ, այնպես էլ՝ բարդ, ինչպես նաև առանձին բառերով ու արտահայտություններով՝ նայած խոսքի իրավիճակային ու հաղորդակցման բնույթին: Ասվածից կարելի է եզրակացնել, որ **նախադասությունը լեզվի շարահյուսական մակարդակի գլխավոր ու հիմնական միավորն է, առավելագույն միավորը:Նախադասությունն ունի կառուցվածք և հաղորդակցական ֆունկցիա:**

Որպես կառուցվածք՝ նախադասությունները լինում են ՝ երկկազմ կամ երկբաղադրիչ և միակազմ՝ միաբաղադրիչ / բայական և անվանական/:Ի տարբերություն երկազմ նախադասությունների՝ միակազմ նախադասություններն ունեն մեկ բևեռ և նույնպես օժտված են քերականական կարգերով:

Նախադասության հիմնական հատկանիշը տրամաբանական միտք արտահայտելն է, մյուս հատկանիշներն ու քերականական կարգերը նպաստում են նախադասության ձևավորմանը: Քերականական կարգերից է ստորոգումը: Մանուկ Աբեղյանը տալիս է հետևյալ բնորոշումը.<<Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածողություն է, որի մեջ ստորոգում է լինում, այսինքն՝ մի առարկայի վերագրվում է մի հատկանիշ. օրինակ՝ նապաստակը վախկոտ է-ն մի խոսք է, որով նապաստակին է վերագրվում վախկոտ հատկանիշը>>:[1] Մեկ այլ լեզվաբան՝ Մ. Ասատրյանը, նշում է.<<Ստորոգում՝ ահա այն կախարդական գավազանը, որը սովորական բառին կամ բառակապակցությանը մի հատուկ կյանք ու էություն է ներշնչում>>:[2]

Հաջորդ քերականական կարգը՝ ժամանակը, ստորոգման անկապտելի մասն է: <<Ժամանակից դուրս ստորոգում չկա>>:[3]

---

1. Մանուկ Աբեղյան,<<Հայոց լեզվի տեսություն>>, Երևան 1965, էջ 359-360

2. Մանվել Ասատրյան, <<Ժամանակակաից հայոց լեզու. շարահյուսություն>>, Երևան 1987, էջ 107

3. Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան <<Ժամանակակաից հայոց լեզվի շարահյուսություն>>, Երևան 2003, էջ 53

Միակազմ անվանական անդեմ նախադասություններում ժամանակն արտահայտվում է նաև ժամանակ ցույց տվող գոյականներով, ածականներով, թվականներով: օրինակ՝ Ամառ: Պայծառ արև: 1918 թիվ:

Հաջորդ՝ դեմքի քերականական կարգը միակազմ նախադասություններում արտահայտվում է հետևյալ կերպ. անդեմ միակազմ նախադասություններում թեև քերականական դեմքի թվի ու ժամանակի արտահայտությունները չկան,սակայն դրանք տրամաբանորեն հասկանալի են: Օրինակ՝ Աշուն: Անձրև: Սրանցում առկա է ժամանակային վերաբերությունը: Կամ՝ Չծխե՛լ: Այստեղ առկա է ապառնի ժամանակի առկայությունը:

Անենթակա/անորոշ դիմավոր/ նախադասություններում արդեն կան ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերը, բայց չկա ենթակա, որին ստորոգում կատարվի: <<Այսպիսի նախադասություններում էլ ստորոգում կատարվում է խոսքային շրջապատով>>[4]: Օրինակ՝ Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն:

Այժմ խոսենք հնչերանգի մասին, որը չափազանց կարևորվում է միակազմ նախադասություններում, քանի որ ինչ-որ տեղ իր վրա է վերցնում նաև ստորոգման գործառույթը: <<Հնչերանգը նախադասության ձևավորման վերհնչույթային միջոց է. այն հաղորդակցական երևույթ է և քերականորեն չի նշույթավորվում>>[5]: Միակազմ նախադասություններում նրա դերը բացառիկ է, որովհետև այստեղ ստորոգումը կատարվում է միայն ձայնային ելևէջներով, որն անվանվում է հնչերանգային ստորոգում:

Վերը նշված փաստերը հաշվի առնելով՝ ստորև կքննենք միակազմ նախադասությունների տեսակները և դրանց յուրահատկությունները:

---

4. Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան <<Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն>>, Երևան 2003, էջ 54

5. Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան <<Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն>>, Երևան 2003, էջ 56

Ընդհանուր գաղափար միակազմ նախադասությունների մասին

Նպատակը՝

- ✓ **Միակազմ նախադասությունների ենթատեսակների ուսուցումը կազմակերպել Եղիշե Չարենցի պոեմների միջոցով՝ձևավորելով աշակերտների մոտ բանավոր հաղորդակցման խոսքը ոճավորելու, ասվածին հուզականություն հաղորդելու իրավիճակային բնույթ:**

Հայերենում նախադասությունների մեծ մասը երկկազմ է: Այսպիսի նախադասություններին հակադրվում են միակազմ նախադասությունները: Որոնցում կա միայն մեկ գերադաս անդամ՝ արտահայտված որևէ դիմավոր բայով, ինչպես նաև գոյականով, ածականով, դերբայով և այլն: Միակազմ նախադասություններն արտահայտվում են ինչպես մեկ բառով /Մթնեց: Աշուն: Կռվել:/, այնպես էլ դրանց գերադաս անդամը կարող է ունենալ լրացումներ /Ոսկի աշուն: Կատարյալ գեղեցկություն/:

Միակազմ նախադասություններում լինում է մեկ կենտրոնական կամ գերադաս անդամ, որը ոչ ենթակա է և ոչ էլ ենթակա ունեցող ստորոգյալ, այլ մի սովորական անուն, բառ- բառակապակցություն /Ամառ: Էջմիածին: Միրգ ու փոշի:/: Հենց այդ մեկ անդամի շուրջն էլ ծավալվում է խոսքը: Այդ տիպի նախադասությունները լինում են ինչպես համառոտ /Աշուն: Չխոսե՛լ:/, այնպես էլ ընդարձակ /Այսօր կարծես շուտ լուսացավ: Ամառային ուրախ տրամադրություն/: Լինում են նաև բարդ / Սոխ չես կերել, սիրտդ ինչու է մրմռում/:

Միակազմ նախադասությունները ոճական արժեք ունեն. դրանք մի տեսակ կարճում են խոսքը, ասելիքը դարձնում ավելի դիպուկ ու նպատակասլաց, պատկերավոր:

Հայերենի միակազմ նախադասությունները տարբեր լեզվաբաններ տարբեր բաժանում ների են ենթարկել: Սույն աշխատության մեջ մենք կառաջնորդվենք << Հայոց լեզու -8>> դասագրքով[6]. այն է՝ միակազմ նախադասությունները բաժանվում են 2 խմբի՝

1. դիմավոր միակազմ նախադասություններ

2. անդեմ միակազմ նախադասություններ

Նշված տեսակները կքննվեն ստորև բերված մասերում, վեր կհանվեն դրանց ոճական առանձնահատկությունները և դերը գեղարվեստական խոսքում:

6. Հովի. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան <<Հայոց լեզու-8>>, Երևան 2017, էջ 143-145

Դիմավոր միակազմ կամ անենթակա նախադասություններ

Այս տիպի միակազմ նախադասությունների կառուցվածքի առանձնահատկությունն այն է, որ չունեն քերականական ենթակա, անենթակա են և հնարավոր չէ ենթական վերականգնել: Միակազմ նախադասություններում գերադաս անդամը որևէ բայ է: Դիմավոր միակազմ նախադասություններում հնարավոր չէ գտնել խոսքի հասցեատիրոջը: Օրինակ՝ Ճտերը աշնանն են հաշվում /ո՞վ /:

Միակազմ նախադասություններն ունեն իրենց ենթատեսակները, որոնք կքննենք ըստ Եղիշե Չարենցի պոեմների[8]:

ա/ Վիճակային: Սրանք նշում են՝

- մթնոլորտային երևույթներ, առարկայի կամ անձի այս կամ այն վիճակ:

Օրինակ՝ Անձրևում է: Ու լուռ է այնպես:

Ու ամեն տան մեջ մահ է ու ավեր:

Ցուրտ էր: Լռություն է, մռայլ մառախուղ: Ուշ է: Ամենուր մահ է կարծես:

- Օրվա պահեր: օրինակ՝

Գիշեր է: Մութ էր մեզ համար, անմիտ, անհեթեթ. . .

<u>Էլի մի վայրկյան</u>. . .և հանկարծ ասես

Դեմս ոգիներ ելան շուրջպարի:

<u>Ու մութ է հիմա այնտեղ, ամայի,</u>

Քամին է միայն ոռնում ու կոծում. . .

<u>Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն. . .</u>

Մութն ընդհանրապես հաճախ է հանդիպում Եղիշե Չարենցի պոեզիայում: Օրինակ՝ Մութ է հիմա, թանձր խավար:

- Տարվա եղանակներ: Օրինակ՝ Գարուն է: Աշուն է: Երբեմն էլ օրվա պահերն ու տարվա եղանակները միաժամանակ են հանդես գալիս: Օրինակ՝ Տոթ է: Ամառվա կեսօր: Այսպիսի միակազմ նախադասությունների ստորոգյալ-գերադաս անդամները սովորաբար արտահայտված են լինում բայի եզակի երրորդ դեմքով:

բ / Բուն անորոշ դիմավոր նախադասություններ։ Այս տիպի նախադասություններում գործողություն կատարողը անձ է, բայց անորոշ է ինչպես դեմքը, այնպես էլ թիվը։

Ստորոգյալներն արտահայտվում են հիմնականում հոգնակի երրորդ դեմքով, բայց եզակիի իմաստ են ունենում։ Օրինակ՝

Մորթում էին կարծես այնտեղ խելագարված մի անասուն... Կամ՝

Ու լցրել էին հողագույն ուրուներ քաղաքն անոթի...

Նրանց հանել էին կամերից ու կոնակից խփել...

Պատահում են նաև բուն անորոշ դիմավոր նախադասություններ ոչ բայական գերադաս անդամով։ Օրինակ՝ Դաշտն էր դեմը՝ փռված էր նա շառագունված ու արևուն։

գ/ Ընդհանրական անորոշ դիմավոր նախադասություններ։ Թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում բավականին տարածված են այնպիսի նախադասություններ, որոնց բայերով արտահայտված ստորոգյալներն ունեն խոնարհված բայի քերականական բոլոր կարգերը՝ դեմք, թիվ, եղանակ, ժամանակ, բայց չունեն կոնկրետ ենթակա, որին ստորոգվեն նրան վերաբերող հատկանիշները։ Նման նախադասություններում խոսքը վերաբերում է բոլորին, դրա համար էլ կոչվում են ընդհանրական։ Ընդհանրական անորոշ դիմավոր նախադասությունները մեծ մասամբ լինում են խորհուրդներ, խրատներ, առաջարկություններ, առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, դարձվածային միավորներ։ Դրանք կարող են արտահայտվել բայի բոլոր դեմքերով։ Հենց նմանօրինակ նախադասություններով է Եղիշե Չարենցը որպես խրատ՝ ներկայացնում տիեզերքի հավերժության գաղտնիքը։

Ու պետք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ՝

Ապրելու հսկա տենչը բեռ արած,-

Ապրել անիմաստ մի կյանքի համար,

Մարել ու վառել աստղերը մարած...

Կամ՝ Պետք է պատասխանել նրանց...

Անորոշ դիմավոր են համարվում նաև մարդ գերադաս անդամով կազմված նախադասությունները։ Եթե մարդ բառը անհոդ է գործածված, և խոսքը վերաբերում է ոչ թե անհատի, այլ՝ բոլորին։

Օրինակ՝ Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի.../Պ. Սևակ/

Եղիշե Չարենցի պոմներում նման օչինակներ չեն հանդիպել։

Անդեմ միակազմ նախադասություններ

Ի տարբերություն անորոշ դիմավոր միակազմ նախադասությունների, որտեղ կա դիմավոր բայ, անդեմ նախադասություններում այն չկա: Չկա նաև ենթակա: Նախադասության ձևավորման հիմնական միջոցը մնում է հնչերանգը: Սրանցում կա մի գերադաս անդամ, որի վերաբերյալ էլ տեղի է ունենում լեզվական հաղորդակցումը: Այդ անդամը կարող է արտահայտված լինել ինչպես անորոշ դերբայով, այնպես էլ որևէ անուն խոսքի մասով, մեծ մասամբ՝ գոյականով:

Ըստ այն հանգամանքի, թե անդեմ նախադասության գերադաս անդամը ինչ խոսքի մասով է արտահայտված, ըստ այդմ էլ այս նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ բայական և անվանական:

ա / Բայական անդեմ նախադասություններ: Այս անդեմ նախադասության գերադաս անդամը անորոշ դերբայն է, որը կարող է հանդես գալ որպես առանձին նախադասություն: Օրինակ՝ Հեռանալ: Կռվել: Կարող է հանդես գալ նաև այլ բառերի հետ: Օրինակ՝ Ճանաչել զիմաստություն և զխրատ իմանալ զբանս հանճարոյ:

Ինչպես ավելի վերևում նշվեց, այսպիսի նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը հնչերանգն է, հենց դրանով էլ պայմանավորված են բայական անդեմ նախադասությունների իմաստային տեսակներ և հաղորդակցման բնույթը: Դրանցով արտահայտվում են հրաման, առաջադրանք, կարգադրություն, հանձնարարություն, հարցում, ցանկություն և այլն:

Եղիշե Չարենցն իր անհատակ հույզերը, ապրումները, իղձն արտահայտել է նմանատիպ նախադասություններով: Օրինակ՝

Քու՛յր, երազի պես ճախրել ու գնալ,

Հմայված ու հեզ ճախրել ու գնալ:

Սակայն ու՞ր գնալ, որ քեզ չգտնեն այդ կոնքերը մերկ:

Հարցման հնչերանգով արտաբերվող այս տիպի կառույցներում կարող է նաև ճարտասանական հարցադրում լինել: Օրինակ՝

Այդ ե՞րբ էր, երե՞կ էր, այն դա՞շտը չէր միթե...

Հարբածին ի՞նչ մինիստր: Ո՞վ գիտի Դրոյին...

Ի՞նչ էր, ի՞նչ էր, ի՞նչ էր. ցնո՞րք, զառանցա՞նք, տե՞նդ...

Նմանատիպ նախադասությունները հուզական մեծ լիցք են պարունակում:

բ / Անվանական անդեմ նախադասություններ: Սրանք այն անվանական նախադասություններն են, որոնց գերադաս անդամն արտահայտված է գոյականով

կամ գոյականական բառակապակցություններով: Սրանք նույնպես չունեն ոչ միայն դիմավոր բայ, չունեն նաև ենթակա. պարզապես նախադասություն են անվանվում, որովհետև միտք են արտահայտում: Ունեն ավարտուն հնչերանգ, ըստ որում՝ մեծ մասամբ հուզական հնչերանգ, հենց դա է պատճառը, որ այս նախադասությունները բայական անդամների նման մեծ մասամբ հուզական, զգացական բնույթ ունեն: Սրանք առավելապես գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, որով կարճվում է խոսքը, նրան հաղորդվում է հուզականություն ու պատկերավորություն: Այս նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է՝

ա/ Գոյականի ուղղական հոլովով: Օրինակ՝

Այլանդակ գուղձեր՝ դևի ապարանք...

Արշալույսների սրբազան արգանդ, ոգու Կաթն Ծիր... Կամ էլ՝

Երևան, Աստաֆյան փողոց: Արևը կարմիր շաֆրան:

Մի ողջ փողոցի առօրյան Չարենցը նկարագրում է ընդամենը բառ-շեշտերով:

Ինչպես միշտ՝ գորշ, փոշոտ փողոց: Սառը ջուր: Խաղող: Գինի:

Մարդիկ: Կառքեր: Մարդիկ:

Աշնանային պատկեր է ստանում Չարենցը ընդամենը մի քանի վրձնահարվածով:

Մշուշ: Թաց, խոնավ-անձրևոտ իրիկուն...

Հեղափոխության մուտքն ու հին կյանքի կործանումը ևս ամփոփվում են սեղմ.

Հիմա ամեն տեղ զնգոց... Երկաթե գրգիռ: Օրերը- հրետանի:

Ու կյանքը, հին կյանքը հիմա- հիշում եք- <<Տիտանիկ>>:

<<Չարենց- Նամե>> պոեմում հեղինակն իր կենսագրության վառ ու տրտում օրերն է հիշում կրկին միակազմ անդեմ նախադասություններով:

Օ՜, երգեր իմ, առաջին, առաջին,

<<Երեք երգ>>... Աստղիկ Ղոնդախչյան>>..... Կամ՝

Կամավոր: Հայկական բանակ: Հրացան: Հրանոթ: Ռումբեր:

Մահ: Մահ: Մահ: Ընդհանուր, հանուր: Ձիվորի, աղջկա, հարսի...

Գալիս է կյանքի մի այլ փուլ, որ կարևորվում է <<իրիկնային, աստղային>> կնոջով.

Կարինե... Մշուշ Կարինե... Ցնորք Կարինե.... Իսկ ապա՝

Սոմա... Լյուսի Թառայան... Կայարան... Կարմիր բանակ: Զորքեր: Զորքեր...

Խավար: Ահավոր սպասում: Հեռուն՝ կրակներ տարտամ...

բ/ Միակազմ անդեմ նախադասություններ՝ արտահայտված գոյական- թվական կապակցությամբ: <<Չարենց- Նամե>> պոեմում շարունակում է իր կյանքի ժամանակագրությունը.

Քսան թվական: Փետրվար: Մարտ: Մայիս: Մոսկով: Իմ սրտում արևն Իրանի:

Մեկ մայիս: Եվ ահա դրոշ կարմիր: Հունվար, փետրվար: Քսանվեց:

Քսանմեկ. . . Արփի՛կ, լուսավո՛ր Արփիկ: Տասնութ: Թվական կյանքի:

Անվանական անդեմ նախադասություններ կարող են կազմվել նաև այլ խոսքի մասերով: Օրինակ՝Երևան: Հույժ կարևոր: <<Ռազմական մինիստրին: Անհապաղ>>:

Ռազմական մինիստր:-Լա՛վ, լա՛վ: Հետո՞:

Դրոյի՝ զինակիցներին սպանելու ամոթալի փաստը ներկայացնում է կրկին կտրուկ, ամփոփ, կարճ, ինչպես ինքը՝ կատարվածը:

Խփել էին սուս ու փուս: Գաղտագողի: Անձեն:

գ/Գոյականի, ինչպես նաև դերանունների հետ կարող են հանդես գալ նաև ահա և այլ բառերը: Օրինակ՝

Եվ ահա- կրկին մի քանի դիակ, և այստեղ ահա- վարսեր կանացի:

Իսկ այստեղ արնոտ մի վերմակի տակ- չորացած փշրանքներ արնաներկ հացի. . .

Իսկ այստեղ ահա մի ոսկրացած ձեռք. . .

Բանաստեղծի հայրը՝ Աբգար աղան ևս, մի համառոտ, բայց բովանդակալից կերպով է հանդես գալիս.

Ահա հայրս՝ հագին կապա. . .

Նրա դեմքը՝ արծաթե ափսե, վրան քիթը՝ կեռ մի դանակ. . .

դ/ Գոչականը նույնպես կարող է գերադաս անդամ լինել, եթե բայի հետ չի համաձայնում: Օրինակ՝

Կապու՛յտ ա ղջիկ, ագաթի ու կաթի պես հոգեթով,

Լուսամփոփի պես աղջիկ. . .

Օ՜, հեռավոր, կապուտաչյա սիրուհիս. . . Կամ՝

Երկրի՛ր իմ որբ, արնաքամ ու ավերակ. . .

Պատերազմի ու ավերումի հոգեցունց ցավը Չարենցն արտահայտում է կրկին հատուկ հնչերանգով.

Օ՜, դու՛ բարբարոս, խելագա՛ր, ցավո՛տ

Երբեմն իմաստուն, երբեմն գազան,

Աշխարհներ այրող կախարդակա՛ն խոտ,

Աշխարհներ շինող բախտի գավազան,-

Դիվային ոգի ճահիճների մոտ, ոչնչի մասին- աղո՛թք սրբազան...

Հրդեհի աստվա՛ծ, հրդեհ ու կրակ, օ՛, Վահագն արի...

Մեկ այլ աստվածություն՝ Սոման ևս, տեղ է գտել Չարենցի պոեզիայում.

Ս՛ոմա, սրբազա՛ն խմիչք, սրբազան դու սեր ոգևորության, դու քաղցր գինի... Կամ՝

Օ՛, անպտու՛ղ վաստակ ու տքնություն երկար

Գոսն օրերում – ոգու հոգնություն եղկ...

Լեզվաբան Ա. Պապոյանն առանձնացնում նաև հետևյալ ենթատեսակները՝ անվանումներ, վերնագրեր: Օրինակ՝ <<Բրոնզե թևերը կարմիր գալիքի>>, թատերական ռեմարկներ[8]:

զ/ Արտահայտում են նաև բացականչություններ: Օրինակ՝ մանկությու՛ն ոսկեթռչուն... Կամ՝ Է՛, բարի գիշեր, անգին ընկերներ: Մարդու ներաշխարհն է բացահայտում՝ դիմելով բնությանն ու միակազմ անդեմ նախադասություններին:

Ա՛խ, այդ դաշտերի հեռուն ոսկեգույն,

Այդ երկինքների կապույտը պայծառ...

Պետք չէ, որ մարդը հեկեկա անքուն-աշխարհում մի օր ապրելու համար... Կամ էլ՝

Դու-ազատությու՛ն, դու- վերջին ցնորք վերջին քաղցրության, դու- հոգու խնդում...

է/ Արտահայտում են նաև բարեմաղթանքներ, կոչեր, անեծքներ ու օրհնանքներ: Հիշենք <<Ամբոխները խելագարված>> պոեմը:

Հեռու՛, մոտրի ընկերներին, աշխարհներին, արևներին, հրանման ոգիներին,

Բոլոր նրանց, ում որ հոգին վառվում է վառ, բոլոր նրանց հոգիներին արևավառ,

Կյանքի, մահի այս ամեհի աղջամուղջում ողջակիզվող ոգիներին

Ողջու՛յն, ողջու՛յն... կամ՝

Ինչպիսի՛ բազմազան երգեր ու հրաշք հեքիաթ... / հիացում/

-Երեսդ դեպի պատը,- գոռաց Շավարշը... / հրաման/

ը/ Քիչ չեն նաև ժխտական բնույթի անվանական նախադասությունները, որոնք հիմնականում ձևավորվում են <u>ոչ մի</u> դերանվամբ: Օրինակ՝

Ոչ մի կամք, ոչ էլ մի հոգի...

թ/ Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամն արտահայտված է վերաբերականով կամ ձայնարկությամբ։

Վա՜յ մեզ՝ մոլորյալներիս։ Դեռ ավելին։- Այո՛։ Իհարկե սխալ էր... Կամ՝ Լուսաբացին ոչ մի ախ։

Եզրակացություն

Միշտ էլ հետաքրքիր է, երբ լեզվական որևէ իրողություն քննվում է գրական նյութի համատեքստում։ Այս աշխատանքի նյութն էր՝ քննել միակազմ նախադասությունները ըստ Եղիշե Չարենցի պոեմների։

Աշխատանքի առաջին մասում ի մի են բերվել մի քանի լեզվաբանների կարծիքներ, դրույթներ, միակազմ նախադասությունների ենթատեսակների բաժանումներ։ Միակազմ նախադասությունները քննելիս առաջնորդվել ենք <<Հայոց լեզու-8>> դասագրքի դասակարգմամբ՝ դիմավոր միակազմ նախադասություններ, անդեմ միակազմ նախադասություններ / բայական և անվանական/։

Այս նախադասությունների հիմնական տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ նրանք ստորոգման փոխարեն ունեն հնչերանգ, որն էլ միտքը նախադասություն է դարձնում։

Հենց այս յուրահատկությունն է, որ լայնորեն գործածավում է հեղինակների կողմից՝ խոսքը ոճավորելու, ասվածին հուզականություն հաղորդելու նպատակով։

Մեր մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Եղիշե Չարենցի ստեղծագործություններում և մասնավորապես պոեմներում բազմաթիվ են նմանօրինակ նախադասությունները։

Դիմավոր միակազմ նախադասություններից առավել հաճախ հանդիպում են վիճակային միակազմ դիմավոր նախադասություններ՝ մթնոլորտային երևույթներ, օրվա պահեր, տարվա եղանակներ։ Օրինակ՝ Տոթ է։ Ամառվա կեսօր։ Ընդհանրական անորոշ միակազմ նախադասություններն ավելի սակավ են հանդիպում։ Հավանաբար պատճառն այն է, որ այս տիպի նախադասությունները հիմնականում լինում են խորհուրդներ, խրատներ, թևավոր խոսքեր, առածներ, ասացվածքներ։

Միակազմ անդեմ նախադասություններից առավել հաճախ հանդիպում են անվանական անդեմ նախադասություններ։ Այստեղ կարևորվում է բառ-պատկերը, որ տարողունակ է դառնում և՛ ձևի, և՛ բովանդակության առումով։ Օրինակ՝ <<Չարենց-Նամե>> պոեմում խոսելով հին կյանքի կործանման մասին՝ ոչ թե ուղիղ ձևով պատմում է կործանումը, այլ՝ կապում խորտակված հայտնի նավի անվանը։

Հին կյանքը հիմա-

Հիշում եք-

<<Տիտանիկ>>...

Նույն տարողունակությունն են ստանում միակազմ նախադասություններում նաև թվականները, կոչականները, ինչպես նաև լեզվական այլ միավորներ։

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ միակազմ նախադասությունները հնչերանգային առումով ավելի հուզարտահայտչական երանգ ունենալով՝ բավական հաճախադեպ են գեղարվեստական գրականության մեջ։ Իսկ այնպիսի մեծություն, ինչպիսին Չարենցն է, կարողացել է օգտվել այդ հատկանիշից առավելագույն վարպետությամբ։

Գրականության ցանկ

1. Մ. Աբեղյան- <<Հայոց լեզվի տեսություն>>, Երևան 1965թ.
2. Մ. Ասատրյան- <<Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն>>, Երևան 1987թ.
3. Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան-<< Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն>>, Երևան 2003թ.
4. Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան-<<Հայոց լեզու-8>>, Երևան 2017թ.
5. Եղիշե Չարենց-<<Պոեմներ, բանաստեղծություններ>>, Երևան 1984թ.

Պոմներից՝ <<Կապուտաչյա հայրենիք>>, <<Դանթեական առասպել>>, <<Վահագն>>, <<Սոմա>>, <<Ամբոխները խելագարված>>, <<Բրոնզե թևերը կարմիր գալիքի>>, <<Ամենապոեմ>>, <<Չարենց- Նամե>>, <<Խմբապետ Շավարշը>>, <<Դեպի լյառը Մասիս>>, <<Մահվան տեսիլ>>, <<Զրահապատ <<Վարդան զորավար>> >>